դատարանի, և սպասէին զալստեան Կուսակալին գործադրել զայն։ Ապա սկսան պարծանօք խօսիլ այսր և անդր, թէ Հայք զկնի աւուրց ինչ ունին հանդիպիլ մեծամեծ վնասուց եւ խսլաւ զրկիլ 'ի քաղաքէս։ Իսկ դպրապետ դատարանի Ալի Էֆէնտի լուելեայն ազդ արար Թէոդորոս Պատրիարքի զգործս Ցունաց, և հանեալ զպատճէն հրովարտակին վաւերեալ 'ի դատաւորէն երեր զայն. զոր տեսեալ ապշեցան և զարհուրեցան յերեսաց ահագին վտանգի։ Եւ կոչեալ զդատաւորն ետուն նմա գրել Իլամ ըստ մտաց գրոցն Հայոց՝ յիշելով 'ի նմա զրովանդակ վանօրայս Հայոց, զբաժին տեղիս և զերիս հետեւակ ազգս, այլովքն հանդերձ. զպատճէն հրովարտակին Ցունաց, եւ զոմանս հին հրովարտակացն Հայոց, և զայլ կարեւոր գրեանս պատրաստեալ յանձն արարին Ադրիանուպօլսեցի Պօղոս վարդապետին, եւ առաքեցին ծածկապէս ցամաքաւ 'ի Կոստանդինուպօլիս։ Թէպէտեւ Թէոդորոս Պատրիարք ինքնին կամեցաւ երթալ, որպէս յայտնի երեւի 'ի նամակաց նորին, այլ միաբանք արգելին զնա 'ի խորհրդոյն, զի մի 'ի հեռանալ նորին 'ի քաղաքէն սրբոյ, Ցոյնք առաւել հաւմարձակութիւն գտեալ, դառնացուցեն զինքեանս։ Իսկ Պօղոս վարդապետ տկարացեալ 'ի ճանապարհի տապանայր 'ի տենդէ, և հասեալ հիւանդագին 'ի Կոստանդինուպօլիս, յանձն արար զգրեանս փոխանորդ Յակոբ Եպիսկոպոսին, եւ ինքն անկաւ 'ի մահիճս։ Եւ Յակոբ Եպիսկոպոս եցոյց զգրեանս գլխաւորաց ազգին, և ապաշէր զնոսա, որպէս Պատրիարքն եւ միաբանք Երուսաղէմի, չառնել անտես զծանրակշիռ խնդիրս ազգին, և փոյթ տանել յեղծումն հրովարտակին Ցունաց, և նորոգել զՀայոցն։ Քանզի Ցոյնք չրջեալ 'ի կողմն իւրեանց զԱրքունի քարտուղարս, ետուն ջնջել և բառնալ 'ի դիւանաց զարձանագրութիւնս հին և նոր հրովարտակացն Հայոց. թէպէտեւ բազումք 'ի գլխաւորաց ազգին խորհէին դառնել զհնարս և դարմանել զվէրսն, զոր ընկալան 'ի դաղտնի նետաձգութենէ Ցունաց, այլ դէպք ժամանակին ոչ յաջողէր նոցա գործել համարձակ. զի ոմանք 'ի նախարարաց որք էին Վալիտէ քեահեայի Եուսուֆ, Իպրահիմ քեահեայ՝ Ինկիլիզ Մահմուտ, Հաճի Իպրահիմ՝ և այլք կամակից սոցին, ո-